ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

1 փետրվարի 2024 թվականի N 151-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
2023 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 14-Ի N 1574-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ
Մ Ա Ս Ի Ն

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի սեպտեմբերի 14-ի «Գերակա ոլորտում իրականացվող ներդրումային ծրագրի շրջանակներում ներմուծվող տեխնոլոգիական սարքավորումների, դրանց բաղկացուցիչ ու համալրող մասերի, հումքի և (կամ) նյութերի նկատմամբ սակագնային, մասնավորապես, ներմուծման մաքսատուրքից ազատելու արտոնությունից օգտվելու համար «Վ.Ա.Շ. ՏՐԱՆՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից ներկայացված հայտը բավարարելու և «Վ.Ա.Շ. ՏՐԱՆՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության, «ԷՎՈԿԱԲԱՆԿ» փակ բաժնետիրական ընկերության նկատմամբ արտոնությունը կիրառելու մասին» N 1574-Ա որոշման մեջ կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունները՝

1) 2-րդ կետի «և 16-17-րդ» բառերը փոխարինել «, 16-17-րդ և 20-րդ» բառերով.

2) 2-րդ կետի «և LIZ0099» բառերը փոխարինել «, LIZ0099 և LIZ0150» բառերով.

3) որոշման հավելվածը 17-րդ կետից հետո լրացնել նոր՝ հետևյալ բովանդակությամբ 18-20-րդ կետերով՝

«18.	7210490009	Սև մետաղյա ցինկապատ հարթ թիթեղ գլանափաթեթով, չներկված՝ առանց պոլիմերային ծածկույթի	Հաստությունը՝ 0,27 մմ-ից մինչև 1,2 մմ, լայնք՝ 1 մետր կամ 1,25 մետր	կգ	3 000 000	Չինաստան, Իրան, Կորեա, Թուրքիա	Չինաստան, Իրան, Կորեա, Թուրքիա	975 000 000	
19.	7210708000	Սև մետաղյա երկկողմանի տաք ցինկապատ հարթ թիթեղ գլանափաթեթով, ներկված՝ պոլիմերային ծածկույթով	Հաստությունը՝ 0,27 մմ-ից մինչև 1,2 մմ, լայնք՝ 1 մետր կամ 1,25 մետր	կգ	3 000 000	Չինաստան, Իրան, Կորեա, Թուրքիա	Չինաստան, Իրան, Կորեա, Թուրքիա	1 500 000 000	
20.	8704229209	Բեռնատար կողավոր դիզելային ավտոմեքենա Ֆոտոն մակնիշի	Բեռնատար կողավոր դիզելային ավտոմեքենա Ֆոտոն մակնիշի 2023 թվականի արտադրության	հատ	6	Չինաստան	Չինաստան	36 900 000	Լիզինգի պայմանագիր թիվ LIZ0150».

4) որոշման հավելվածի «Ընդամենը» պարբերության մեջ «796 938 800» թիվը փոխարինել «3 308 838 800» թվով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

01.02.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ